

ԾԱՂԻԿ ԿԸ ՀՐԱՄԱՐԱԿՈՒԻ ՀԱՐԱԹ ԲԵՐԸ Լ
տարին 50 թիւ:

Բաժանորդագրին Կ[Ն]Ն[Ս]ԻԿ՝ Թուրքիոյ Համար
տարեկան 50 զր2, Ռուսիոյ Համար 5 ռուբլի,
ուրիշ երկիրներու համար 12 ֆր: — Վեցամսեայ
բաժանորդագրութիւն եւս կ'ընդունուի:

Գաւառներէն դրամի տեղ Օսմանեան նա-
մակադրոշմ եւս կ'ընդունուի:

Միայն երեք թիւ ապառիկ կը զրկուի. այնու-
հետեւ բաժանորդագրին չը վճարողը կը դադրի
թերթ ընդունելէ:

Ծանուցման տողը 2 զուրուշ:

ԾԱՂԻԿ

Հ Ր Ա Պ Ի Ր

ԾԱՂԻԿԻ ՎԵՐԱԵՐԵՎԱԼ ամէն գործի համար գին
Առ Տնօրէն-Հրատարակիչ
ՅՈՎՆԱՆ Գ. ՎԱԼԱԳԱՇԵԱՆ
Պոլիս, Պաշէ-Կափու, Թաշ Խան, քիւ 50
درعليه ده بغيچه قیوسنده طاش خاندۀ ۰ نومروده
«زاغیک» غزته سی مدیری پالاقاشیان حوونان
S'adresser à
HOVNAN PALACACHIAN
Directeur du journal arménien « Dzaghik »
Rue Bahtché-Kapou, Tach Han, 50
CONSTANTINOPLE

40 փարս

Ազգային, Քաղաքական եւ Գրական

40 փարս

ՆՈՐ ՇԵՋԱՆ — Գ. ՏԱՐԻ. ԹԻՒ Ե

Ե Ր Կ Ո Ւ Շ Ա Բ Թ Ի

22 փետրուար 1893



﴿ روز مسعدت بروز ولادت حضرت ظل الهی ﴾

مجدد بنیان دولت، مؤید شان و شکوه سلطنت ولی نعمت بمنتز، متبوع مفخم و معظمز پادشاه مراحمیناهمز افتدمن حضرتلرینک ولادت
باعث السعادت هایونلرینه مصادف اولمسندن طولای بوروز فیروزده بتون جهان ذوق و شوق کرماکرمه حاضر و آماده و یو یوم مبارک
بالجمله اصداقا و زیر دستان شاهانه ایچون بر عید اشرف و اسعد در.

بو یوم مسعودی ادراک کبی بر نعمت عظمادن طولای مستظل سایه عدالت و مظهر عنایت و عاطفت ولی نعمت بیمنت بولنان بالجمله
بندکان مصادقت نشان و نائل شرف تابعیت شهنشاه عیم الاحسان اولان کافه زیر دستان معرض تشکر و محبتده فصل اظهار مسرت ایتمسونلر؟
احسان مخصوص ربانی بخشایش عالالعال یزدانی اولان وجود مفخرت نمود تاجداریلری بو کون عاطفت و مرحمت، شفقت و فطانتیه
مشاریالینان، دره التاج عثمانیان، سلطان ذیشان درکه کلیات احوال جهانک حقایقه و جزئیات افعال ناسک دقایقه آشنا و عالم مدینتک سرائرینه
آگاه اولان افتدمن حضرتلرینک سبجایای سنیة خداپسندانلری حقیقه تعریف، لایقیه توصیف غیر قابل بر امر محال در.
فلاکتیدکان و بیچارکانه نصیر هرصنف حریقزدکانه دستگیر اولان ذات ملائکسمات شاهانلری التفات بیغایه و توجهات بینهایت سنیهلریله
بالجمله عالم باب احسانمآب شهریاریلرینک دعاخوانی اولمشلردر.

زمان سعادت نشان شاهانه لرنده ممالک محروسة المسالک تاجداریلرینک هرجهتده بولندینی صکی کویلره وارنجهیه قدر خلقک ظلمت
جهل و نادانیدن خلاصی ایچون پک چوق مکاتب عالیسه و ابتدائیه کشاد اولنمش اولدینی و دها سائر نیجه نیجه مؤسسات نافع و تشبثات
خیریه منحصرآ آثار و همم جلیله جناب سلطان محمد عبدالحمید خان ثانی اولدینی بدیهی اولمسيله بویله بر پادشاه ذیشانک شرف تابعیتنه
مظهرین نعمت عظماسيله مفتخر و مباهی بولنان بالجمله اصداقا و صنوف تبعه و برابا شان عبودیتیه لایق اولدینی اوزره تحدیث نعمت جهاتقیمت
ولی نعمت بیمنت ایچون کرک پایتخت سلطنت سنیهلرنده و کرک ممالک محروسة شاهانه لرنده بوروز بروزک شرفیه اوله رق اظهار مسرت و شادمانی
ایچون فردک وظیفه مقدسه سی بولنان دعای تمادی و عمرو عافیت و تزیاید شان و سطوت جناب شهنشاهیلرینک فیوضات بی غایتندن اقتباس
مظهرین عظماسيله ده حائر نصاب مفخرت بولنان (زاغیک) مخالصة رفیق دخی فرط تعظیبات و تقدیسات رقیتمکارانه ایله و جانب لازمه تبریک
و مظاهرین وظایف مفروضه دعاخوانی بی اجرایه جرأت و مسارعت ایدر.

عبد مملوک صداقت مسلوك

حضرت شهریارى

حوونان پالاقاشیان

ՔՆՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՌԹԻԻ

Լրագիրը ըստածը, կ'ըսենք Մադիկի վերջընթեր թուով, մանաւանդ մեր ազգին համար, միակ կէտ նպատակի ունենալու է ժողովրդեան միտքը կրթել և բարոյականը զօրացնել, հաստատուն ներկարագրի, զօրաւոր բնաւորութեան տէր ընել զայն:

Ուրեմն լրագիրը մեր ժողովրդեան համար կրթարան և մանաւորապէս բարոյականի ուսուցիչը պէտք է լինի: Եւ որպէս զի լրագրութիւնը կարենայ այս գերն լի ու լի կատարել, նախապէս ինքը հիմնուած լինելու է բարոյական սկզբունքներու վրայ, և երբեք և որ և է պարագայի մէջ ունենալու չէ այնպիսի ընթացք որ ծառայէ ընթերցողին հաւատքը խախտելու իւր ուղղամտութեան և անկեղծութեան մասին, զի այնուհետեւ իւր ձայնն, իւր կարծիքն իսպառ կը կորսնցնէ իւր նշանակութիւնն, և իւր յայտնած ամենէն տարրական ճշմարտութիւններն անգամ վերապահումով կը լսուին: Այլ եւս ինքը բարոյականի ուսուցիչ չլինիր, այլ քար գայթակղութեան:

Այս վիճակն ունի գեղարարար մեր լրագրութիւնը: Ընթերցող հասարակութիւնն անշուշտ մեղաւոր չէ, զի երբ իւր աչքերով ճերմակ տեսածը լրագրութեան մէջ սեւ կը կարգայ, սեւ տեսածն ալ՝ ճերմակ, երբ իւր հրեշտակ գիտցածը լրագրութեան մէջ չարամտութեամբ սատաշայ ներկայացուած կը տեսնէ, և սատաշան ալ՝ հրեշտակ, բնականաբար իւր հաւատքը կը խախտի այդ լրագրութեան վրայ:

Թէ իրօք մեր ընթերցող հասարակութիւնը, մանաւորապէս իւր կարգացածը հասկացող, իւր կարգացածին ներքին նպատակին թափանցել գիտցող ընթերցողաց դասը չունի հաւատք մեր լրագրաց ուղղամտութեան վրայ, այս շատ ճշմարտ է: Չայս հաստատելու համար կրնայինք շատ մը օրինակներ յիշել: Բայց պիտի յիշենք նորագոյն օրինակ մը միայն:

Իբր ամիս մը առաջ, տեղական թերթի մը մէջ քննադատութիւն մ'երեւցաւ Ամեն Տ. Մեղիթեղեկ Սրբազանի Հովուական Աստուածաբանութեան վրայ: Այն ժամանակ տեսանք այդ քննադատութիւնը, բայց չուզեցինք կարդալ ու չը կարդացինք զայն՝ գիտնալով այդ թերթին ոգին ու նպատակը: Չը կարդացինք, որովհետեւ հաստատ համոզուած էինք և եմք որ ճշմարտութիւնները չեն կրնար չխեղաթիւրուիլ այդ թերթին մէջ: Բայց հիմա, ամիս մը յետոյ, պարտաւորեցանք կարդալ այդ քննադատութիւնը, վասն զի շատեր թէ՛ անձամբ և թէ՛ նամակներով մեզ դիմելով, ուզեցին մեր կարծիքն իմանալ նոյն քննադատութեան մէջ երեւցած յայտնութեանց մասին: Եւ մեր կարծիքն իմանալու համար մեզ կը դիմէին, վասն զի այդ քննադատութիւնն

հրատարակող թերթին ուղղամտութեանը վրայ տարակոյս ունէին: Ձմիւռնիայէն ստացուած նամակ մը բացէ ի բաց «չար քննադատութիւն» կ'անուանէր զայդ քննադատութիւն, որոյ «անձնական կրքի արդիւնք» լինելուն համոզուած լինելը յայտնելով, կը խնդրէր յատկապէս մեր ալ կարծիքն իմանալ:

Լրագրութիւն մը, ըստ մեզ, մեռած է բարոյապէս, երբ զարգացած և խելահաս ընթերցողաց հաւատքը ջնջուած է անոր ուղղամտութեանն և անկողմնակալութեանը վրայ:

Չերկարեմք սակայն և անցնիմք բուն խնդրոյն՝ որ թելադրեց մեզ այս մէկ քանի տողերը:

Ձէինք ուզեր «չար քննադատութիւն» լինելը յայտնի երեւցող քննադատութեան մը կարեւորութիւն տալ ու այդմասին գրել, բայց քանի որ կը խնդրուի, ահա երկու խօսքով մեր անաչառ դիտողութիւնները:

Քննադատ Արեղային գլխաւոր նպատակն եղած է համոզում գոյացնել տալ թէ Ա. Հովուական Աստուածաբանութիւնը հեղինակութիւն չէ, այլ թարգմանութիւն է, և թէ՛ Բ. այդ աշխատասիրութիւն բողոքականութեան կ'առաջնորդէ:

Առաջին կէտի մասին խօսելն աւելորդ է, վասն զի բացարձակ խժրժանք լինելը յայտնի կ'երեւի: Մութատեանց Սրբազան արդէն իսկ իւր յառաջաբանին մէջ ըսած է. «Պարտաւորեցանք... բնութեամբ մանի, ծողկաբաղ առնել և մեր Առաքելական Ս. Եկեղեցւոյ պաշտօնի ուղղութեան համաձայն՝ ՊԱՏՐԱՍՏԵԼ (ուշագրութիւն ընելու է որ չըսէր յօրինել) սոյն Հովուական Աստուածաբանութիւնը»:

Կարեւորն է երկրորդ կէտը: Եթէ քննադատ Արեղային Ս. Գրքէն գոնէ տող մը վկայութիւն բերած լինէր Հովուական Աստուածաբանութեան դէմ և ապա փաստաբանէր, եթէ Հայոց Առաքելական Ս. Եկեղեցւոյ ականաւոր Ս. Հայրապետներէն ու վարդապետներէն ապացոյց մը յառաջ բերած լինէր և ապա ըսէր թէ Հովուական Աստուածաբանութիւնը չհամապատասխանէր մեր եկեղեցւոյ քրիստոնէական և առաքելական հոգւոյն, եթէ Հայ մատենագիր վարդապետի մը չըսէնք Հայրապետի վկայութեամբ հաստատել թէ Հովիւ բառը չգործադրուիր անխորապէս քահանայի, վարդապետի, եպիսկոպոսի և նոյն իսկ կաթողիկոսի համար, այն ժամանակ պիտի ըսէինք թէ՛ քննադատ Արեղային գրածն եթէ ոչ քննութիւն, դէթ քննական փորձ մ'է: Բայց քանի որ զուրկ է թէ՛ Ս. Գրոց և թէ՛ մեր Ս. Եկեղեցւոյ Ս. Հայր և վարդապետաց վկայութեանէն, ակնհայտ է որ բնին որ քննադատութիւն չէ, այլ նախանձ թելադրեալ թշնամանք՝ այն պատուական անձին դէմ որ շատ բարձր է իւր նախանձորդաց ստորին խորհուրդներէն, և որ՝ ինչպէս պապական կոնդակին դէմ

պաշտպանեց մեր եկեղեցին, և իւր պատասխանագիրն ազգային և օտար մամլոյ հրատարակութեան արժանացաւ, նոյնպէս եթէ հարկ լինի երբեք պաշտպանել Հայ Եկեղեցին բողոքականութեան դէմ, դարձեալ նոյն բարձրաստիճան եկեղեցականին պաշտպանութեանը պիտի վստահի բոլոր ազգին խիղճն ու համոզումը:

Քննադատը, կուենիկ-Արեղայ, աւելի լաւ կ'ընէր որ Հայոց եկեղեցւոյ վտանգը վնասէր 1890ին ի վենետիկ հրատարակուած Ագաթանգեղոսի քննադատութեան մէջ, և իւր նորընծայ եղբայրները ժողովելով գոնէ պաշտպանէր իրենց ուսուցչապետ Օրմանեան Սրբազանի հայրաբանական և նուիրապետական ասպնդներով պատրաստած Արուն որ ջարդ ու փշուր եղած է վենետիկեան նոյն քննադատութեան մէջ: Ի՞նչու արդեօք լռութիւն կը պահուի այս մասին, կը փափագինք գիտնալ:

Շ Ա Բ

ՀԱՅ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԵԱՆՅ

ՃԱ.

ՄԵՇ—ԱՊՐՕ ԶԷԼԵՊԻ

(Շար. Գախոդ քիւէն)

Արրահամ Ապրո՝ այլ և այլ ուղեւորութիւններ կատարելու պէտքն զգալով, 1853ին ինքնակամ կը հրաժարի եգիպտական սեղանաւորութենէն ալ, վաճառապետութենէն ալ, և յաջորդաբար կը ճանապարհորդէ յեգիպտոս, յԱնգղիա և 1857ին ի Բարիզ, ուր տասնամեայ Պետրոսիկ որդին տարածած մեռնելով՝ սաստիկ կը յուզուի, և քաջառողջ ու առողջ Արրահամ Ապրոն չլիմանալով այս դառն վշտին, երկու ամիս յետոյ ինքն ևս Շահնազարեան Կարապետ վարդապետէն Ս. Հաղորդութիւն առնելով՝ կը վախճանի 1857 սեպտեմբեր 18ին, ծնողական ժառանգական հիւանդութեամբ, որ մինչեւ վերջին տարիքն յերեւան եկած չէր:

Թէ՛ Պետրոսիկին և թէ՛ հօրը՝ Արրահամ Ապրոյի յուզարկաւորութիւնը մեծահանգէս կատարուած են ի Բարիզ, և այս նշեցեցոյց մարմինները զմեսած՝ Փէր-Լաշէզ գերեզմանատունը տարուելով թաղուած են: Դամբանական արարողութիւնը՝ ըստ պատշաճի կատարած է Շահնազարեան Կարապետ վարդապետն, որ Ղեւոնդ-Երեցի պատմութեան հրատարակութիւնը ձեռնած է Արրահամ Ապրոյին, հանդերձ նոյն տպագրութեան Մեկենասին վիմատիւ պատկերովը:

Արրահամ Ապրոյին վիմատիւ պատկերն և յուզարկաւորութեան նկարագիրն՝ հանդերձ տոհմային ծանօթութեամբ հրատարակուած են նաև ի Փարիզ Հայերէն և Ֆրանսերէն լեզուով, Գեր. Այվազովսքի Հայր Գաբրիէլի գրական-պատկերազարդ հանդիսին մէջ:

Ապաքէն կ'արժէին Արրահամ—Ապրոյի համար եղած այս կրկնակի պատուարեր եւ գնահատելի հրատարակութիւնը, քանի որ Արրահամ—Ապրոն աշխատած էր ի Բարիզ

առաջին անգամ Հայկական մատուռ մը եւ գարոյ մը հաստատելու, միանուագ 10 000 ֆրանք նուիրելով նոյն նպատակին համար, եւ սոյն առաջագործութիւնը իրագործելու մը- տօք փութով՝ իւր բարեկամներէն ալ 50 000 ֆրանքէն աւելի գումար մը հաւաքած էր:

Առ այս ոչ նուազ մասնակցութիւն ունեցած են Արրահամ - Ապրոյի մօտիկ ազգականներէն եղող Եռսուֆեան Յովսէփ Զէլէ- պին, Գրիգոր Մանուկ Պէյ և Լազարեան Պա- յազաթը, եւ այլք:

Արրահամ - Ապրոյ թողած է Ռափայէլ և Առաքել անուն մանչ զաւակներ, և մատա- ղաթի դստրիկ մը:

Ռափայէլի վրայ տեղեկութիւն չունիմք: Իսկ զհեղեկազէմ երիտասարդն Առաքել իւր ընդունած կատարեալ կրթութեամբն ու լեզ- ուագիտութեամբն՝ Պէյութեան՝ և յետոյ քրիստոնէից մէջ Վէլիբութեան բարձր պատ- լոյն առաջին բարձրացողն եղաւ, և յեզիպ- տոս Բարձր Իմամիլ Փաշայի Խալիվութեան ժամանակ, Խարթումի, Սուտանի և Ֆէզ- օղլու գաւառաց ընդհանուր կուսակալ կար- գուեցաւ, եւ իւր պաշտօնավայրը երթալով, 1873ին Հապէշաց վերջին պատերազմին զոհ եղաւ՝ Աւստրիացի Զիշի անուն առձմիկ երի- տասարդ զօրավարի մը հետ:

Արրահամ - Ապրոյի գեւատի աղջիկն մեծ- նալով՝ ի Բարիզ ամուսնացած է Ֆրանսացիի մը հետ:

Առաքել Ապրոյի աղջիկն՝ Իմիւսին Նու- պարեան գերգաստանի հետ հարսնանալով, ունեցած է Առաքել պէյն, Բարձր Նուպար Փաշայն, և ուրիշ բարեմայն զաւակներ:

Այս դարուս սկիզբէն ի վեր՝ Ապրոյեանց չառաւիղներն այլ եւ այլ տէրութեանց մէջ բարձր պաշտօններով փառաւորուեցան, մա- նաւանդ եզիպտական իշխանութեան ոստա- նին մէջ:

Ով չյիշեր յեզիպտոս՝ Եռսուֆեան Պո- ղոս-Պէյն՝ որ ի մօրէ՝ Ապրոյեան գերգաստա- նին կը վերաբերի, և որ մեծամեծ ծառայու- թիւններ մատուցանելով եզիպտոսի Փոխար- քայ Մէհմէտ Ալի փաշային, բարձր պաշ- տօններով փառաւորուեցաւ:

Եռսուֆեան Պոզոս Պէյին գրաբառ կեն- սագրութիւնը հրատարակուած է՝ չեմ յիշեր ո՛ր տարւոյն Բազմալէպին մէջ, Նոյնպէս, Առաքել Պէյ Նուպարեան, որ ի մօրէ թոռն է Առաքել - Ապրոյի, Մէհմէտ Ալի փաշայի Խալիվութեան վերջին տարիներն՝ Խարթում, Սուտան և Ֆէզօղլու գաւառաց ընդհանուր կուսակալ կարգուեցով, կենցաղադիտական մեծ ճարտարութեամբ կը կառավարէ՝ իրեն հսկողութեան յանձնուած ժողովուրդն, եւ թանչիկ հիւանդութեամբ տկարանալով, 1858ին Սայիտ փաշայի օրով կը վախճանի ի Սուտան, և մարմինը փոխադրուելով Սպլէքսանդրիա, Ս. Պոզոս-Պէյարոս եկեղեցւոյն կից՝ ընդարձակ պարտիզին մէջ կը թաղուի, հոյակապ գամ բարան մը կանգնուելով վրան:

Այս քարակարկառ ճարտարագործութեան եւրոպայի ճանապարհորդք խնդիր հետա- քըրքուին այցելել:

Առաքել Պէյ՝ անժառանգ զուով, Բարձր Նուպար Փաշա ժառանգած է Նորա եղբոր- մէն մնացած 45 000 լիւրայի պատրաստ գու- մարն, որոյ զրեթէ մէկ տասներորդ բաժ- նովը հաստատուած էր Խալիվի Շահնա- ղարեան ժառանգութեան վարժարանն, որ յե- տոյ «Առաքել Նուպար Շահնաղարեան» յոր-

ջորջուեցաւ, և վարժարանի ծրագիրն ալ ըն- դարձակուելով, գիշերօթիկ և ցերեկեայ ու- տանդաց թիւն ալ ստուարացաւ:

Բարձր Նուպար Փաշա՝ Սայիտ Փաշայի քարտուղարութեան պաշտօնէն սկսելով, հետզհետէ այլ եւ այլ պետական պաշտօնա- վարութեամբք հասաւ մինչեւ եզիպտոսի նա- խարարապետութեան բարձր պաշտօնին, զոր ընդ երկար վարեց: Ունի Վէլիբութեան բարձր աստիճանը և առաջին կարգի (սմա- նլիյի եւ Մէհմէտիյի պատուանշաններն, ինչ- պէս և օտար Տէրութիւններէ բաղմաթիւ ա- ռաջնակարգ շքանշաններ:

Եզիպտոսի Խալիվութիւնը՝ զՆորին բարձ- րութիւնը այնքան կը յարգէր, որ ի պա- տիւ Նորին Պայծառախալութեան՝ մինչեւ իսկ բանալ տուած է՝ «Նուպարիյէ» անուամբ ջրանցք մը:

Բարձր Նուպար Փաշա՝ որ ի մօրէ Ապրոյ- եան, և ի հօրէ՝ Նուպարեան կրկնալսեմ ազնուական ցեղերու վերաբերող ազգատոհ- մի մը պայծառախալ շառաւիղն էր, կը փե- սայանայ Վսեմախալ Երամեան Գիւրգ Պէյին, պատկուելով Օրիորդ Յըլիկ կամ Յուլիանէ Գ. Երամեանի հետ, յորմէ ծնած են Վսեմ Պո- ղոս Փաշա Նուպարեան՝ Նախագահ Ընկ. Ուսումնաց Պէյիւրայի յեզիպտոս, և նազելա- շուք երկու բարեկիրթ աղջիկները:

Նուպար Փաշան՝ Շահնաղարեան կարա- պետ վարդապետին սիրուներէն ու յարգող- ներէն լինելով՝ կտակահատարն եղած է հան- դուցեւոյն:

Նորին Վսեմութիւնը՝ Շահնաղարեան վար- ժարանին Բնագիտութեան և Տարրաւեժու- թեան վերաբերեալ հարուստ եւ կարեւոր գործիներ զրկեց Բարիզէն՝ 600 լիւրայի ա- լելի գումար մը ծախսելով: Ինչպէս և եր- րեմն Շահնաղարեան հանգ. կարապետ վար- ղապետի առաջարկին վրայ՝ 2000 լիւրա նը- լիրեց Հայագէտ Վիքթոր Լանկուայի Թրան- ներէն (1867—1869 հրատարակուած) երկ- հատոր տոհմային պատմութեան աղագ- րութեանը համար, որ պիտի ամբողջանար հինգ հատորով, և որոյ երկու հատորները միայն հրատարակուեցան՝ երկասիրողին տա- րածամ մահուան (1869 մայիս 14) պատճա- ռաւ: Ոստանիկ Տէր Մարգարեանցին ի Բա- րիզ երկրագործական ձեմարանին ուսանո- ղական բոլոր ծախքերն Վսեմ. Նուպար Փա- շան կը հոգար, յանձնարարութեամբ յաւէտ սղարացեալ Ազաթօն Գրիգոր Էֆէնտիի:

Վսեմ. Նուպար Փաշան՝ մեծ ծառայու- թիւններ մատուցած է և կրնայ մատուցա- նել եզիպտոսի ազգայնոց, եթէ զիտնան օգ- տուիլ Նորին Վսեմութեան բարեսրտութեան:

Նուպար Փաշայի քոյրը՝ Զմիւռնիոյ Պել- ճիքայի եւ Հոլանտայի հիւպատոսարանի թարգման՝ Մարգար Ապրոյի մայրն է, որոյ տանը մէջ կը մնան տոհմային չառ ձեռագիր յիշատակարաններ, զորս ամբողջութեամբ ընդօրինակած է հնախոյզն և յաւէտ ողբաց- եալ Փիլղալէմեան Ղեւոնդ վարդապետ:

Ապրոյեան տոհմին յատկացեալ զամբարան մը կայ Զմիւռնիոյ Ս. Ստեփաննոս եկեղեց- լոյ յարակից գերեզմանատան պարտիզին մէջ, պատկից Մեսրոպեան հին վարժարանին, ուր կը յիշեմ Մարգար Ապրոյի գերեզմանը:

Պետական կարեւոր պաշտօններովն հան- րածանօթ Վսեմ. Ապրոյ Էֆէնտին՝ (1) եւս

(1) Սահակ — Ապրոյեան Էֆ. երբեմն Բ. Դրան Գաղղիարէն թղթակցութեան գիւա-

ի մօրէ վերաբերութիւն ունի մեծանուն Ապ- րո Զէլէպիի ազգատոհմին հետ:

Ապրո—Շամ—Պէօրէկեան կամ Ապրոյեան մ'ալ կայ Ոսկերչաց շուկայն, սակայն այս ցեղն տարբեր Ապրոյեան (2) է:

Աստուածատուր-Ապրոյի տապան մ'ալ կայ ի Զմիւռնիա, ըստ ասելոյ մեր Զմիւռնացի ծե- րունագարդ բարեկամ Ճմարտախօսեան Ստե- փան Էֆէնտիի: Սա՛ Ազգ. Պատրիարքարանի մէջ, Աղաւնի—Ստեփաննոս, Աստուած սուր, Մատթէոս և Յակովբոս Պատրիարքաց ժամա- նակ, Հայերէն քարտուղարութեան կամ դի- ւանապետութեան պէս պաշտօն մը վարած է ամենայն արժանաւորութեամբ՝ իւր քաջա- վարժ գրաբառագիտութեամբը:

Իսկ մեք կը փափաքէինք ունենալ Ապրո- Զէլէպիի տապանագրին օրինակը, որ եթէ չնորհ ընեն մեզ զրկել Աղբիւնուսօլոյ Գեր. առաջնորդ Տ. Մեսրոպ (Արքեպիսկոպոսն, կամ Մեծ. Սանտաճեան Մաքսուտ Էֆէնտին, յանձնու շնորհապարտ կը թողուն:

Ապրոյեան գերգաստանի մը պէս տոհ- մային հոյակապ ազնուականութիւն մը, որ այսօր իրեն նշանաւոր պայազատներովը կը փառաւորուի, կ'արժէ արդարեւ որ հետա- մտութեամբ ուսումնասիրուի, եւ բազմակող- մանի՝ ազգագրութիւնը պարաստուելով՝ ի լոյս ընծայուի:

Ա. Յ. ԱՅՎԱԶՆՆ

Յ. Գ. — Խոնարհարար կը խնդրեմք՝ Վսեմ. Տիգրան Փաշայէն և Վսեմ. Ասլան— Ապրոյէն, ինչպէս նաեւ Բարձր Նուպար Փա- շայի պայազատ՝ Վսեմ. Պոզոս Փաշա Նու- պարեանէն, որ բարեհաճին Ապրոյեան ազ- գատոհմին վերաբերեալ ազգագրական տեղե- կութիւններ և յիշատակներ ընդ փոյթ հա- ղորդել մեզ:

Նոյնպէս, Զմիւռնաքանակ ազնուաշուք Մար- գար - Ապրոյէն, և հնախոյզ Պ. Սաւալանեան պատուելիէն կ'աղաչուի, որ Ապրոյական տապանագիրներուն օրինակներն, և թէ՛ այլ տոհմային յիշատակագիրներու դաղափար- ներն յղեն մեզ:

Աղեքսանդրիտանի մեր յարգելի եւ ու- սումնադարձ բարեկամ՝ Պ. Աղեքսանդր Զի- կիանեան ալ, երախտապարտ պիտի կացուցա- նէ զմեզ, եթէ բարեհաճի Նուպարեան Ա- ռաքել Պէյի տապանագիրն օրինակել և զրկել առ մեզ:

Արժ. Տ. Յովհաննէս Աւագ քահանայ Մը- կրեան շնորհ թո՛ղ ընէ մեզ՝ արտագրելով և մեզ յղելով Մեծ Ապրո Զէլէպիի՝ իւր ժա- մանակակից Պատրիարքին ուղղած նամակի

նին գլխաւորն էր, և զարդիս՝ Պետական Խորհրդոյ անդամ, գնահատեալ կառավարու- թիւնէն՝ Օսմանիյէ և Մէհմէտիյէ Զրդ կարգի շքանշաններով: Ունի նաեւ Պելճիքայի Տէրու- թեան Լէօբօլտի կարգին հրամանատարու- թեան և Հոլանտայի կառավարութեան Լիւք- սէմպուրիկ կարգին հրամանատարութեան շքանշանները:

(2) Շամ—Պէօրէկեան Յարութիւն եւ Ե- ղիսէ անուններով՝ արուեստագէտ երկու եղ- բայրներ կային:

Յարութիւնին որդիքն էին՝ Յակորջան և Զօրաջան:

Եղիսէի որդիքն՝ Ամբրոսիոս, Իգնատիոս, Լորենտիոս, Գրիգորիոս և Ռափայէլ:

Ամբրոսիոսի տղայն է Եղիսէի Մկրտիչ Ա- ղայն՝ որ Ապրոյեան կ'ստորագրէ, հօրը՝ Ամբ- րոսիոս անունը կրճատելով, և Ապրոյի վե- րածելով:

պատճեններն, որ իւր տեսակին մէջ բառազըն նախան և բանասիրական գործ մ'է: Այդ նամակ կը գտնուի Տէրոյնցի հրատարակած շաբաթական լրագրին մէջ:

Վերջապէս, փափաքելի էր որ ամեն իրա- զէկ ազգայինը՝ Մեծ Ապրիլ—Չէլսիի վերա- բերեալ անտիպ մնացած աւանդական տեղե- կութիւններն և զխաղիքն հաճէին մեզ զըր- կեւ, ընդունելով կանխիկ մեր շնորհակալու- թիւներն:

Ծաղիկի յառաջիկայ թուով պիտի հրա- տարակուի հաշակաւոր ԽԱՎԱՃԱ-ՍՐՐԱՀԱՄ ԿԻԻԼՊԵՆԿԵԱՆԻ հետաքրքրաշարժ կենսա- գրութիւնը:

Ա. Յ. Ա.

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Սոյ Տ. Ամեն. Մկրտիչ կաթողիկոսն Ա- տանա երթալով, տեսակցեր է Վսեմ. կու- սակալին հետ որ փոխադարձ այցելութիւն տուեր է Ն. Ամենապատուութեան:

— Թէ և մի քանի լրագիրք հրատարակե- ցին թէ Գեր. Վահան Ծ. վարդ. Յակոբեան ընդունած է Արարիկի տաճարը թեան պաշտօնը, բայց մենք ստուգապէս կ'իմանա՞նք թէ ընդհակառակն հրաժարած է՝ Արարիկի տաճարէն կառավարելու անկարող լինելն յայտ- նելով:

— Գոհութեամբ կը ծանուցանեմք թէ Մանգուսի Էֆեմար լրագիրն, որ անորոշ ժա- մանակաւ դադարման դատապարտուած էր, բարձրագոյն ներման արժանացած լինելով, մտտ օրէն պիտի սկսի վերստին հրատարակ ուիլ:

— Պետրոս սարկաւազ Խարմանեան՝ Ակ- նայ Լիճք գիւղին համար, և Շահնուշար սար- կաւազ Յովհաննէսեան՝ Մշոյ Առինջք գիւղին համար քահանայ ձեռնադրուեցան: Առաջինը կոչուեցաւ Տ. Նշան, երկրորդը՝ Տ. Երեւոմ:

— Երկուստարդ արուեստագէտն Վահրամ էֆ. Սվաճեան իւր մօր հետ յեգիպտոս ու- ղեւորեցաւ՝ Աղեքսանդրիոյ և Փահիրէի մէջ նուագահանդէսներ տալու մտադրութեամբ:

— Իրր երկու տարի առաջ Պատրիարքա- կան կոնդակաւ կարգաւոր չհրատարակուած Մամրէ վարդապետ Պէնիկեան այս անգամ վերստին հոգեւորականաց դասուն մէջ մտաւ, արտօնութեամբ Ս. Պատրիարք Հօր:

ԾԱՂԻԿԸ ՀԱՂԻԼ ԿԱՐԵԼԻ Ե. ՎԱԼ ԿԵՍ ԹԵՐԹ ՄԻԱՅԻՆ ՀՐԱՄԱՐԱԿԵԼ ԱՅՍՕՐ: ՅԱՌԱՋԻԿԱՅ ԹԻ- ԼԷՆ ՍԿՍԵԱԼ ԿԱՆՈՆԱԿՈՐԱՊԷՏ ՍԿՍԻ ՀՐԱՄԱՐԱԿՈՒԻ ՀԱՐԵԱԹ ՕՐԵՐԸ:

Ա Ր Ժ Է Ք Դ Ր Ա Մ Ո Ց			
Օսմ. լիւրան 00 զրէ. Էն			
Մէծիակի	407 39	Վեցնոց	401 10
Քառ արդ մեծիւ	407 5	Բուսիդ քոլ	90 42
Մանր մեծիւ	403 20	Նարդեան	87 39
Մէծալիք	96 30	Գրիմից	54 20
Հինգնոց	401 40	Անգղ. լիւր	410 43
Մանէթ թղթադրամ 8 58			
Գոնսդիտե	24 29	Բուս. երկ.	93 50
Թահվիլ. Օսմ.	85	Թաւալիյէ	49

ԱՐՏՈՆԱՏԻՐ Ա. ՍԱՔԱՅԵԱՆ

Էսկի-Չապքիէ փողոց, թիւ 61

Ուրբաթ օր Իւսկիւտարի գերեզմանատան մէջ սեւ հողը իջեցուցին 22 տարեկան հա- մակրելի երկուստարդ մը՝ Թորգոմ Թորգոմ եան, որդի Մեծ. Պօղոս էֆ. Թորգոմեանի: Տխուր արարողութեան կը նախագահէին Սըր- բազան Արքեպիսկոպոսունք Մեթիսեդեկ և Մատթէոս: Ներկայ էր յուզարկաւորաց ըն- տըրեալ բազմութիւն մը: Պատկեր բերուած էին Ֆէնէրճեան ընտանեաց և Կ. Ռուբին և Գ. Վանլեան էֆէնտիներու կողմանէ: Սըր տառուչ դամբանականներ արտասանեցին Թորգոմ Աճմեան և Գրիգոր Վանլեան է- ֆէնտիք: Մեր խորին ցաւակցութիւնը յայտ- նելով երկնից միտիթարութիւնը կը հայցեմք հանգուցելոյն վշտահար ծնողաց և պարագա- յից:

Տպագրական Տեսչութեան գլխաւոր պաշ- տօնատար և Կայս. Պալատան թարգմանիչ- ներէն Վսեմաշուք Պօղոս էֆ. Պառնասեան դասն կորուստ մ'ունեցաւ շաբաթ առաւօտ՝ յանձին իւր քսանամեայ դստեր, Տիկին ԼՈՒ- ԿԻԱ. Յ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ, մին Մեղպուրեան վարժարանի բարեկիրթ շրջանաւարանէն: Յուզարկաւորութիւնը երէկ կատարուեցաւ յԱլիւտար, ի ներկայութեան բարձրաստիճան եկեղեցականաց և ցաւակից բարեկամաց ու ազգականաց խումբ բազմութեան: Գազաղին վրայ պսակներ դրած էին Տէր և Տիկին Պալ- լարեան, Տէր և Տիկին Ֆէրմանեան, Զրաք- եան ընտանիքը, Մարտիրոս Ղազարեան, Կա- րապետ Տօտակեան, Միսաք Յարեանեան և այլք: Մարմինը ամփոփուեցաւ տեղոյն գե- րեզմանատունը: Վաղամեռի տիկինը կը թո- լու երկօրեայ դաւակ մը: ԾԱՂԻԿ իւր խորին ցաւակցութիւնը կը յայտնէ վշտակի ծնողա- ցը և ամուսնոյն:

Շաբաթ առաւօտ իւր մահկանացուն կըն- քեց նաև հանգուցեալ Յակոբ Պարոնեանի այրին, Տիկին ՍՍԹԵՆԻԿ ՊԱՐՈՆԵԱՆ, թող- լով երկու փոքրահասակ որդեր՝ Աշոտ և Զա- պել: Յուզարկաւորութիւնը կատարուեցաւ երէկ յՈրթապիւղ և մարմինը ամփոփուեցաւ տեղոյն գերեզմանատունը, իւր ամուսնոյն քով:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ի Ռուսիա, կառավարութիւնը կը խորհի ջնջել Հրեայ հասարակութեան ազգային-հա- տարակային ժողովներն (Թաղական խորհուրդ- ներն), նկատելով գլխաւորաբար որ այս մար- մինք կը նպաստեն անվթար սահելու Հրե- ութիւնն, ցեղային և կրօնային սեպհական ո- գին, որով Հրեայք մեկուսի կ'ապրին Ռուսիոյ մէջ և ժողովրդեան ստուարագոյն մասին հետ չեն ձուլուիր:

— Ի Բաքի, Վճռաբեկ Ատեանք Բանա- մայի կաշառքի դատին մէջ մերժեց Պ. Շարլ Լէսէրսի, Պ. Փոնդանի և Պ. Սանդուուայի բողոքն Ամբաստանիչ ստենի վճռոյն դէմ. հետեւաբար պիտի դատուին Եղեգնադատ Ատեանի առջեւ: — Պուլանժէական Կուսակ- ցութիւնն ընտրելի ներկայացուց Վ. Անտ- րիկօ, որ խոստացաւ Բանամայի գործին մէջ մեղսակից ամէն երեսփոխանաց անընկեր յայտնել: Երեսփոխան նախագահ ընտրուե- ցաւ նախկին վարչապետ Պ. Ժիւլ Գիլի:

— Քոնկլոյի պետութիւնը լուր առեր է թէ, Պելժ հաղարապետ մը Բոնկոյի ներքերը կուտեր է Թիւրու-Թիւրի որդւոյն հրամանաց ներքեւ դռնուող բնիկներուն հետ, որք յաղ- թուեր են:

— Ռուսիոյ էքսթէրիւնսլաւ նահանգին մէջ, ինչպէս և Ռոսթովի շրջակայքը հըն- տախտ ծագեր է:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պաեսօնաբաշխութիւնք. — Պօլըի կառա- վարիչ Աճմէտ Շէվքը էֆէնտի՝ Եօզլաւ գա- ռաւին կառավարիչ, Եօզլաւի կառավարիչ Ջիւա բաշա՝ Պօլըի կառավարիչ, Գարալաճի գալմագամ Թահիր էֆէնտի՝ Պրուսայի Ելնի- շէիր գաւառակի գալմագամ, Մալաթիոյ նախնական դատարանին նախագահ Սամի է- ֆէնտի՝ Գօնեայի նախնական դատարանին ընդհանուր դատախազի օգնական, Պէնկա- զիի պատժական դատարանին նախկին նա- խագահ էպուէսուտ էֆէնտի՝ Մալաթիոյ նախնական դատարանին նախագահ, Մարաշի նախորդ կառավարիչ Նազըմ՝ փաշա՝ Ամասիոյ գաւառին կառավարիչ անուանեցաւ:

Պաեսուսեանք. — Ազատարարի շքադրամ տրուեցաւ Սկիւտարի թաղապետութեան ա- ռաջին երկրաչափ Անտօն էֆէնտի, հրդեհի պաշտօնեայ Անտօն էֆէնտի, Գ. կարգի մէ- ճիտիչ պատուանշան՝ կայսերական անձնա- կան գանձուն նախարարութեան արքունի կալուածոց դիւանին տնօրէն Յարութիւն Չէքի էֆէնտի:

Ասիւսեանք. — Երզնկայի կառավարիչ Նա- մրգ պէլի՝ իւլայի Ա. աստիճան, Տիարպէրի կուսակալ Սըրրի փաշայի որդւոյն Եուսուֆ Բադի պէլի՝ սանկէի Բ. աստիճան:

Պեսակաւ խորհուրդը որոշեց է վերցը- նել Գալաթիմալ կոչուած այն արհեստաւորաց դասն որք Նիկիմիդիայէն, Կէլպէն, Տարը- ճալն, Թուղայէն, Գարթալէն և այլ տեղե- րէ մայրաքաղաքս բերուած պտուղներու ու բանջարեղէններու վաճառումն ստանձնած են՝ տեսակ մը մենավաճառի դրութեամբ: Գալ- զիմալներն այդ պտուղներն ու բանջարեղէն- ները վաճառելով, այլ և այլ եղանակաւ դը- րամներ կ'առնուն երկրագործներէն, որք բողոքած են ձեռնհաս իշխանութեան:

— Սամսոնէն ի Զարչամալ շինուելիք շոգե- շարժ թրանսլէյին խնդրով կը շարունակէ զբաղիլ կառավարութիւնը:

— Մայրաքաղաքիս կալուածական տրոց տակաւին չգանձուած մասը մէկ ու կէս մի- լիոն ոսկոյ կը հասնի եղեր:

— Հեռագրական և թղթատարական վե- րատեսչութեան մէջ դատական դիւան մը հաստատուած և տնօրէն կարգուած է Գա- րեգին էֆէնտի:

— Մուսուլի նահանգին արքունի կալուա- ծոց մէջ բնակող արաբ և քիւրտ Աշիլթիներն ևս պիտի մասնակցին Համիայէ հեծեղազու- ղերու կազմութեան:

— Գամի գործարան մը մայրաքաղաքիս մէջ հաստատուելու մենաշնորհ խնդրուած է:

— Ապահովագրական Օսմ. ընկերութիւն մը կազմուեցաւ 440,000 ոսկոյ դրամազը- խով, որ բաժնուած է 40,000 բաժնեթուղ- թերու, իւրաքանչիւրը 11 Օսմ. Ոսկոյ: Ըն- կերութիւնը, որուն գլխաւոր հիմնադիրն է Օսմանեան Պանքան, իւր գործառնութիւն- ները պիտի տարածէ մասնաւորապէս գաւա- ռաց մէջ՝ ուր մասնաձեւեր ունի Պանքան: Ընկերութեան առաջին գործը պիտի լինի ա- պահովագրել այդ մասնաձեւերու մէջ ա- լանդ ձգուած ապրանքներն, որոց ընդհա- նուր արժէքը կը հասնի 255 30 միլիոն Փը- րանքի:

— Ընկրմեալ և վտանգաւոր կոչուեցան մէջ գտնուող նաւերն ազատելու համար տե- սակ մը տիկ հնարած է Գաթիէմուսիի փաս- տաբաններէն Գօզմա օղլու Եուվան էֆէնտի, որ հնարքի արտօնադիր ստացած է իւր այս գիւտին համար:

— Գաթիէմուսի հրդեհը ծագումն առեր է հանգուցեալ Գարամաճեան էֆէնտիի դուստր և ֆախապեան կարապետ էֆէնտիի ամուսին տիկին Իսկուհի ֆախապեանի վարձու տուած մէկ կալուածէն: Յիշեալ տիկինը Գաթիէմուսի մէջ ունեցած ինը տուններն ևս այրած են: